ԴԵԿՏԵՄԲԵՐԸ ԵՆԿ-Ի ՀԵՏ

Սիրելի՛ ընթերցողներ, սիրով ներկայացնում ենք Ձեզ ԵՆԿ հերթական ամսաթերթը, որում կպատմենք կազմակերպության դեկտեմբեր ամսվա անցուդարձի մասին:

ԿԱՄԱՎՈՐՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

Դեկտեմբերի 5-ին Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, այս տարի ևս մեծ տոնախմբությամբ, նշեց կամավորների միջազգային օրը՝ ԵՆԿ ՀԿ տեղական և միջազգային կամավորների մասնակցությամբ

ԵՆԿ ՀԿ նախագահ Արթուր Նաջարյանի կողմից կամավորներին հանձնվեցին շնորհակալագրեր և անվանական տիտղոսներ 2019թ. ընթացքում կազմակերպության ծավալած գործունեության մեջ ունեցած ակտիվ ներգրավվածության և կամավորական աշխատանքների իրականացման համար:

«CAUCAN - COUNTER AND ALTERNATIVE NARRATIVES FOR HUMAN RIGHTS IN

Դասընթացները անցկացվեցին հետևյալ թեմաներով՝

Մարդու իրավունքները և մարդու իրավունքների պաշտպանության երաշխավոր կառույցները,

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը,

Ինչ է ատելության խոսքը և «Ո՛չ ատելության խոսքին» արշավին միանալու ընթացակարգը,

Մարդու իրավունքների հակադիր կամ այլընտրանքային պատմվածքները:

Լոկալ դասընթացների շարքը, վարեցին կազմակերպության երիտասարդական աշխատող Մարիամ Հակոբյանը և կամավորներ Մելինե Շահնազարյանն ու Սյուզաննա Պետրոսյանը

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

«ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒԹՅԱՆ և ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ» ԾՐԱԳՐ

Դեկտեմբերի 7-ից 13-ը Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնը» «Երիտասարդների ձեռներեցության ուսուցում հյուրընկալության և զբոսաշրջության ոլորտում» ծրագրի շրջանակներում հյուրընկալել է ծրագրի գործընկերների հանդիպումը:

Հանդիպման նպատակն էր մշակել և ստեղծել ձեռնարկ, որը ներկայացնում է առցանց հարթակներում հյուրատների և հոսթելների առաջխաղացման ուղիները:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՏԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՄՓՈՓԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԵՎ ԱՄԱՆՈՐՅԱ ՏՈՆԱՎԱՃԱՌ

Դեկտեմբերի 20- ին « Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնում տեղի ունեցավ կենտրոնի 2019 թվականի ամփոփիչ-հաշվետու միջոցառումը՝ Միջոցառման առաջին հատվածում կենտրոնի համակարգողի կողմից իրականացվեց տարեկան գործունեությանամփոփ ներկայացում, որին հաջորդեց կենտրոնի սաների ձեռքի աշխատանքների ամանորյա ցուցահանդես-վաճառքը՝ «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի բակում՝

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

«ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Գյումրու « Երիտասարդական նախաձեռնություններիկենտրոն» ՀԿ-ն ընդգրկվել է ՀՀ կրթության գիտության, մշակույթի և սպորտի նախարարին կից հասարակական խորհրդում:
Դեկտեմբերի 18-ին Խորհուրդը գումարել է իր առաջին նիստը, որը վարել է խորհրդի նախագահ, նախարար Արայիկ Հարությունյանը

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ՀԱՂՈՐԴԱՇԱՐ

«Ցայգ» հեռուստաընկերության «Մարդու իրավունքները Նոր Հայաստանում» հաղորդաշարի հյուրն է Գյումրու «Երիտասարդական նախաձեռնություններիԿենտրոն» ՀԿ նախագահ Արթուր Նաջարյանը, ով խոսում է Հայաստանում երիտասարդության մասին օրենքի կարևորության, երիտասարդության հիմնախնդիրների, առկա հնարավորությունների և այլ կարևոր հարցերի շուրջ: Իսկ Գյումրու ԵՆԿ ՀԿ անդամ, «Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրի մենթոր Հայարփի Պողոսյանը պատմում է, թե ինչպես ԵՆԿ ՀԿ-ի ընձեռած հնարավորությունները հետ վերադարձրին իրեն Գյումրի ու ստիպեցին հավատալ, որ հայրենի քաղաքում կարևորվում է երիտասարդության սոցիալական դերն ու նշանակությունը և որ երիտասարդները կարող են փոփոխությունկատարել:

ԴԻՏԵԼ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԱԿՈՒՄԲՆԵՐ

«Գյումրուերիտասարդական նախաձեռնությունների» կենտրոն ՀԿ-ում ավարտվեցին անգլերենի սկսնակ և միջին մակարդակների վեցամսյա տևողությամբակումբները: Վերջին հանդիպման ընթացքումմասնակիցները կիսվեցին իրենց տպավորություններով ու ձեռքբերումներով, ինչպես նաև պարգևատրվեցին վկայականներով:

«Երիտասարդների տունը» մշտապես ապահովում է պատանիների ուսուցողական և հագեցած առօրյան՝ կազմակերպելով տարբեր կրթական ու ժամանցային ծրագրեր:
Շարունակվող ընթացիկ ակումբներին զուգահեռ մեկնարկել է պարի ակումբը:
Ակտիվ քննարկումներով ընթացքի մեջ է բանավեճի ակումբը:
Պատանիների նախաձեռնությամբ սկսվել է բնական հումքով, էկոլոգիապես մաքուր օճառների պատրաստումը:
Դեկտեմբերի 5-ին կենտրոնում նշվեց կամավորների միջազգային օրը: Միջոցառման ժամանակ ներկայացվեց կենտրոնի ակտիվ պատանիների մասին պատմող հաջողության պատմությունների տեսանյութերը:
Դեկտեմբերի 9-ին կենտրոնի պատանիները Երևանում հանդիպեցին ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանի հետ և տվեցին իրենց հետաքրքրող հարցերը:
Կենտրոնում իրենց գործնական պրակտիկան «Հասարակայնության հետ կապերի հիմունքներ» առարկայից անցկացրեցին ՇՊՀ Սոցիոլոգիա բաժնի 3-րդ կուրսի ուսանողները Արթուր Նաջարյանի ղեկավարությամբ:
Իսկ ՇՊԴի «Սոցիալական աշխատանք» բաժնի 4-րդ կուրսի ուսանողները ուսումնաճանաչողական այցով ծանոթացան կենտրոնի գործունեությանն ու ծառայություններին
«Երիտասարդների տան» տարեկան գործունեությունն ամփոփվեց դեկտեմբերի 20-ին կազմակերպված տարեկան ամփոփիչ միջոցառմամբ, որի ժամանակ իրականացվեց նաև կենտրոնի պատանիների կողմից պատրաստված ամանորյա զարդարանքների ցուցահանդես- տոնավաճառ:
Տոնական օրերին ընդառաջ կենտրոնի պատանիները ԳԳՊԱ դահլիճում դիտեցին «Մոռացված խաղալիքների հեքիաթը» թատերական ներկայացումը:
Պատանիների համար տարին ամփոփվեց ամանորյա տոնական միջոցառմամբ:

ՀԵՏԵՎԵՔ ԷՋԻՆ